# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
# № ԷԱՃԱՊՁԲ-9/9-8 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 13-ը մայիսի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Դավթյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **19.02.2019թ.** կնքված № ԷԱՃԱՊՁԲ-9/9-8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***663,785 (վեց հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետովնախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման,Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **ք. Երևան, Ղ. Փարպեցու 22/14** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ** |
| Հ/Հ 900011144129 | **Հ/Հ 1660004154880100** |
| ՀՎՀՀ 02522157 | **ՀՎՀՀ 02542882** |
| ՀՀ պաշտպանության նախարարության | **տնօրեն** |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | |
| Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ | Ա. ԴԱՎԹՅԱՆ |

Լ.Ա. Դավթյան
Ն.Գ. N 000360875

Հավելված N 1
N ԷԱՃԱՊՁԲ-9/9-8 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2019թ., ըստ համապատասխան եռամսյակների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ, | 3-րդ եռամսյակ, | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 29.11.19թ |
| 1. | Տոլպերիզոնի հիդրոքլորիդ, tolperisone hydrochloride | հատ | 3,000 | 77.16 | 231,480 | 1500 | | 1500 |
| 2. | Տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ), tolperisone (tolperisone hydrochloride), lidocaine (lidocaine hydrochloride) | հատ | 500 | 453.79 | 226,895 | 250 | | 250 |
| 3. | Կետամին (կետամինի հիդրոքլորիդ) ketamine (ketamine hydrochloride) | հատ | 150 | 1,369.40 | 205,410 | 75 | | 75 |
| **Ընդամենը** | | | | | **663,785** | | | |

Հավելված N 2
N ԷԱՃԱՊՁԲ-9/9-8 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2019թ., համապատասխան ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.19թ. |
| 1. | **Տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04** /Տոլպերիզոնի հիդրոքլորիդ, tolperisone hydrochloride/ | 33631380/508 | 231,480 | 115,740.00 | 115,740.00 | 115,740.00 | 115,740.00 | 115,740.00 | 231,480 | 231,480 | 231,480 |
| 2. | **Տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04** /Տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ), tolperisone (tolperisone hydrochloride), lidocaine (lidocaine hydrochloride)/ | 33631380/507 | 226,895 | 113,447.50 | 113,447.50 | 113,447.50 | 113,447.50 | 113,447.50 | 226,895 | 226,895 | 226,895 |
| 3. | **Կետամին n01ax03** /Կետամին (կետամինի հիդրոքլորիդ) ketamine (ketamine hydrochloride)/ | 33661111/504 | 205,410 | 102,705 | 102,705 | 102,705 | 102,705 | 102,705 | 205,410 | 205,410 | 205,410 |
| **Ընդամենը** | | | **663,785** | **331,892.5** | **331,892.5** | **331,892.5** | **331,892.5** | **331,892.5** | **663,785** | **663,785** | **663,785** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԱՎԹՅԱՆ